«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր,
ի.գ.թ., դոցենտ
Մ. Մուրադյան

«____» ______________ 2026 թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Միլա Գրիգորիի Հայրապետովայի՝ «Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները և դրանց դերը պատշաճ վարչարարության իրավունքի իրացման հարցում» թեմայով ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, մունիցիպալ, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Պ. Ղուկասյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Ա. Ստեփանյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Ա. Գևորգյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Խառատյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Խալաթյանի, քննարկեց Միլա Հայրապետովայի՝ «Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները և դրանց դերը պատշաճ վարչարարության իրավունքի իրացման հարցում» թեմայով ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց ներքոթվարկյալ հետևություններին:

Մ. Հայրապետովայի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում և պայմանավորված է հետևյալ հանգամանքներով: Ատենախոսության թեման հանդիսանում է ժամանակակից իրավաբանական գիտության և իրավակիրառ պրակտիկայի համար ակնհայտորեն արդիական և պահանջված: Աշխատությունում ուսումնասիրվում են պետական իշխանության գործողություններից արդյունավետ իրավական պաշտպանության մեխանիզմների ձևավորումը, զարգացումը և կիրառումը, ինչը հատկապես կարևոր է իրավական պետության կայացման, մարդու իրավունքների պաշտպանության և հանրային իշխանության սահմանափակման տեսանկյունից:

Աշխատության արդիականությունը պայմանավորված են նաև ժամանակակից պետություններում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների անհրաժեշտության աճով, մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշների զարգացմամբ, ազգային իրավական համակարգերի

կատարելագործման պահանջով, վարչական արդարադատության և դատական վերահսկողության ընդլայնման միտումներով:

Ատենախոսության մեջ թեման դիտարկվում է ոչ միայն արդի իրավական համակարգերի, այլև պատմական խորքային կտրվածքով՝ սկսած միջնադարյան Եվրոպայից և Magna Carta-ի սկզբունքներից մինչև հայկական իրավական մտքի զարգացումը: Այս հանգամանքը վկայում է, որ հեղինակը թեման դիտարկել է համապարփակ՝ տեսական և պատմահրավական հիմքերի վրա:

Թեման ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական կարևորություն: Տեսական առումով այն նպաստում է իրավունքի գերակայության, իրավական պաշտպանության միջոցների և վարչական արդարադատության ինստիտուտների զարգացմանը: Կիրառական առումով՝ առաջարկները կարող են օգտագործվել օրենսդրական բարեփոխումների և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման համար:

Ատենախոսության նպատակն ընդհանուր առմամբ հստակ ձևակերպված է և բխում է ընտրված թեմայի տրամաբանությունից: Նպատակից բխող խնդիրները կառուցված են տրամաբանորեն, որոնք հետազոտության ընթացքում հիմնականում լուծված են ամբողջությամբ: Աշխատության գլուխների կառուցվածքը վկայում է, որ հեղինակը հետևողականորեն անդրադարձել է յուրաքանչյուր խնդրի լուծմանը՝ ապահովելով գիտական ամբողջականություն:

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտված է հեղինակային մոտեցումներում և եզրահանգումներում, որոնք հիմնված են ինչպես տեսական, այնպես էլ էմպիրիկ վերլուծության վրա:

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունն առանձնանում է իր համալիր մոտեցմամբ՝ համադրելով պատմական, համեմատական, տեսական, և կիրառական վերլուծությունները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը լիովին համարժեք է հետազոտության նպատակներին և խնդիրներին: Կիրառված մեթոդները հնարավորություն են տվել ապահովել ուսումնասիրության խորությունն ու բազմակողմանիությունը:

Գիտական ապարատը ձևավորված է պատշաճ մակարդակով: Օգտագործված հասկացությունները, կատեգորիաները և եզրույթները հստակ սահմանված են, ինչը բարձրացնում է աշխատանքի գիտական արժեքը:

Ատենախոսության տեսական հիմքը հարուստ և բազմազան է: Գրականության ընտրությունը արդիական է և համապատասխանում է հետազոտության նպատակներին:

Աշխատությունում օգտագործված էմպիրիկ նյութի վերլուծությունը իրականացված է պատշաճ մակարդակով և նպաստում է եզրակացությունների հիմնավորմանը:

Ատենախոսության եզրակացությունները բխում են կատարված հետազոտությունից և օժտված են տրամաբանական փաստարկվածությամբ և ամբողջականությամբ:

Ատենախոսության արդյունքներն օժտված են գործնական արժեքով, կարող են կիրառվել օրենսդրական բարեփոխումների գործընթացում, դատական և վարչական պրակտիկայում, իրավաբանական կրթության ոլորտում:

Ատենախոսությունն ունի հստակ կառուցվածք, աշխատանքի գլուխները տրամաբանորեն փոխկապակցված են և ապահովում են թեմայի ամբողջական բացահայտումը:

Լեզվաոճական մակարդակը պատշաճ է, տեխնիկական և ձևական պահանջները՝ պահպանված են:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են գիտական հոդվածներում և ներկայացված են գիտաժողովներում:

Ատենախոսության սեղմագիրը և հրատարակված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները և չեն հակասում դրանց:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները.

1. Ներածության *«Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը»* բաժնում հեղինակը նշում է, որ իր կողմից ուսումնասիրվել են կոնկրետ դատական գործեր: Թեև օգտագործված գրականության բաժնում ներկայացված են այդ գործերը, սակայն աշխատանքում նկարագրված չեն ուսումնասիրված գործերի ընտրության չափանիշները և վերլուծության մեթոդաբանությունը, ինչը հնարավորություն կտար ընթերցողին պատշաճ գնահատել հետազոտության արդյունքում կատարված հետևությունների և եզրահանգումների էմպիրիկ արժեքը:

2. Ատենախոսության առաջին գլուխն ամբողջությամբ նվիրված է պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքի զարգացման պատմական նախադրյալներին: Թեև ծավալային տեսանկյունից նշված գլուխը էական տեղ ունի ատենախոսությունում (14-ից 37-րդ էջերը), այնուամենայնիվ այդ գլխի շրջանակներում կատարված հետազոտության արդյունքում գիտագործնական արժեք ներկայացնող որևէ հետևություն չի կատարվել:

3. Պաշտպանության ներկայացվող 1-ին դրույթում հեղինակն օգտագործում է «վարչական իրավունքի սկզբունքների *անմիջական կիրառումը*» եզրույթը՝ հիմնավորելով սկզբունքների անմիջական կիրառման անհրաժեշտությունը՝ նորմատիվ անորոշությունը հաղթահարելու և վարչաիրավական հարաբերությունների մասնակիցների շահերի հավասարակշռությունը ապահովելու դիրքերից: Միաժամանակ, եզրակացության 11-րդ կետում հեղինակը հիմնավորումներ է ներկայացրել «անմիջական կիրառման սկզբունքի» օրենսդրական ամրագրման առաջարկի օգտին: Այս իրավիճակը հանգեցնում է հասկացութական

ապարատի անորոշության, ինչը չի կարող նպաստել ատենախոսության գիտական արժեքի հիմնավորմանը:

4. Պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթում հեղինակը հանգել է հետևության, որ «(...) անհրաժեշտ է ամրագրել վստահության պաշտպանության իրավունքը որպես սկզբունք...»: Հեղինակի այս մոտեցումը վիճելի է առնվազն հետևյալ կոնտեքստում՝ Օրենսդիրն այս սուբյեկտիվ իրավունքը կիրառելի է համարում միայն ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու դեպքում անձի (պետության, համայնքի) համար ոչ բարենպաստ հետևանքները բացառելու տրամաբանության մեջ («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ և 64-րդ հոդվածներ), ինչը վկայում է այն մասին, որ այս գաղափարը չունի համընդհանուր, ելակետային և ղեկավար բնույթ, որոնք սկզբունքի *էական* հատկանիշներն են:

5. Պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթում հեղինակն առաջարկում է որպես վարչարարության հիմնարար սկզբունք օրենսդրորեն ամրագրել իրավունքի միատեսակ կիրառման և մեկնաբանման սկզբունքը, իսկ դրա խախտումը դիտարկել որպես վարչական ակտի բեկանման կամ փոփոխման հիմք: Այս առաջարկի կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ հեղինակը հաշվի չի առել վարչական հայեցողության (Ermessen) բնույթը: Վարչական հայեցողությունը ենթադրում է վարչական մարմնի իրավունքը՝ օրենքով սահմանված շրջանակներում ընտրելու մի քանի իրավաչափ լուծումներից առավել նպատակահարմարը: Սա նշանակում է, որ միևնույն իրավական նորմի կիրառմամբ վարչական մարմինը կարող է տարբեր գործերով կայացնել տարբեր որոշումներ՝ հաշվի առնելով գործի յուրահատուկ հանգամանքները: Իրավունքի միատեսակ կիրառման պահանջը որպես կատեգորիկ սկզբունք ներդնելը վարչարարության մեջ կհանգեցնի հայեցողության փաստացի վերացմանը և վարչական գործունեության էության մեխանիստական ընկալմանը: Բացի այդ, իրավունքի միատեսակ մեկնաբանման և կիրառման ապահովումն ավանդաբար դատական իշխանության (մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի) սահմանադրական գործառույթն է, այլ ոչ թե ակտիվ վարչարարություն իրականացնող գործադիր մարմինների պարտականությունը: Հետևաբար, այս դրույթն ունի ներքին հակասություն վարչական իրավունքի հիմնարար ինստիտուտների հետ:

6. Ատենախոսության մի շարք հատվածներում, պաշտպանության համար ներկայացվող դրույթներում հեղինակը առաջարկություններ է ներկայացնում մի շարք գաղափարների օրենսդրական ամրագրման օգտին՝ որպես իրավունքի սկզբունք: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում ամրագրված նորմի համաձայն վարչարարության հիմնարար սկզբունքներն *սպառիչ չեն և չեն կարող արգելք լինել* վարչարարության այլ սկզբունքներ կիրառելու համար: Ինչպես տեսնում ենք, սկզբունքների իրավական ամրագրման հարցում Օրենսդիրը չի որդեգրել

Numerus clausus կանոնը, ինչի լույսի ներքո հեղինակի՝ իր կողմից առաջարկվող գաղափարների օրենսդրական պարտադիր ամրագրման մոտեցումն առնվազն լրացուցիչ հիմնավորման կարիք ունի:

Ինչպես երևում է նշված նկատառումների բովանդակությունից, դրանք չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը ու պայմանավորված են հեղինակի հետագա աշխատանքներն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Միլա Գրիգորիի Հայրապետովայի՝ «Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները և դրանց դերը պատշաճ վարչարարության իրավունքի իրացման հարցում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ պահանջներին, իրենից ներկայացնում է վարչարարության և վարչական վարույթի սկզբունքների կիրառման մեխանիզմների և ազդեցության հիմնախնդիրների վերաբերյալ համակարգված, համալիր և ավարտուն հետազոտություն, իսկ դրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման՝ ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք՝ սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ:

Մ. Հայրապետովայի ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության կարծիքը պատրաստվել է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Ա. Գևորգյանի կողմից (քննարկվել և հավանության է արժանացել ամբիոնի՝ 2026 թ.-ի հունիսի 22-ի նիստում, արձանագրություն № 8):

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի պետի պարտականությունների կատարող Ա. Կարապետյան

«22» 06 2026 թ.

Ա. Կարապետյանի ստորագրությունը հավաստում եմ՝

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի վարչական աշխատանքները համակարգող պրոռեկտոր Կ. Մուրադյան